

Կ. Մ. ԳԵՐՄԱՆՅԱՆ

## ՔԱԶՎԱՐԴԻ ԲԱԶՄԱՑՄԱՆ ՓՈՐՉ

Պարտեզային քաջվարդը (*Paeonia hybrida*) կարելի է համարել Երևանի Բուսաբանական այգու մշակվող լավագույն բազմամյա ծաղկեբույսերից մեկը:

Չնայած դրան քաջվարդը Երևանի և ամբողջ ռեսպուբլիկայի պայմաններում դեռևս քիչ է տարածված, որի հիմնական պատճառը նրա դանդաղ բազմացումն է:

Քաջվարդի բազմացման ամենատարածված եղանակը արմատային սիստեմի բաժանումն է, այդ դեպքում մի թփից կարելի է ստանալ մի քանի նոր բույսեր, որոնք սկսում են նորմալ ծաղկել միայն տնկումից երեք տարի հետո:

Ենթևույզը դրանից մեկն է խնդիր դրեցինք պարզելու թե ինչպես պետք է բաժանել թուփը և ինչպես տնկել այն որպեսզի նոր ստացված բույսերը ծաղկեն այլևի շուտ: Այդ նպատակով 1958 թվականի աշնանը (25/10) ու 1959 թվի գարնանը (25.4.) համապատասխան փորձեր ենք դրել բուսաբանական այգու, պարզելու՝ բաժանված արմատների մեծություն և նրանց տնկման խորություն ազդեցությունը բույսերի աճի և ծաղկման ժամկետների վրա: Փորձերը դրվել են հետևյալ վարիանտներով:

1. Բաժանված մասը ունեցել է 2 աչք (բողբոջ)
2. » » » » 3
3. » » » » 5
4. » » » » 7

Յուրաքանչյուր վարիանտում վերցրել ենք 10 բույս, որոնք տնկվել են 2, 3, 5, 7, 10 սմ խորություն: 10 սմ խորության տնկված բույսերը ընդունել ենք որպես ստուգիչ, որովհետև պրակտիկայում սովորաբար բաժանված արմատը տնկում են այդպիսի խորություն: Թուփը հողից հանելուց հետո հողազուրկը զգուշութամբ լվացել ենք ջրի ուժեղ շիթի տակ, որպեսզի արմատային սիստեմը ազատված լինի հողի մասնիկներից և աչքերը լավ երևան. դրանից հետո բույսը բաժանել ենք մեծ և սուր դանակի օգնությամբ:

Բոլոր վարիանտները տնկել ենք նույն օրը և միևնույն մարզում: Բոլորի նկատմամբ էլ ամբողջ վեգետացիայի ընթացքում կիրառվել է միևնույն ագրոտեխնիկան: Փորձերի հաշվառման արդյունքները (տես աղյուսակ 1) ցույց տվեցին, որ աշնանը տնկված բույսերից, որոշ թփեր ծաղկեցին հաջորդ գարնանը, բայց հիմնականում ծաղկեցին այն թփերը, որոնք ունեին 3 և այլևի աչքեր և տնկվել էին 3—5 սմ խորությամբ:

Այն թփերը, որոնց աճման կոնը գտնվում էր 8—10 սմ խորության վրա, առաջացրել են նորմալ վերերկրյա մասսա և համեմատաբար քիչ քանակությամբ ծաղիկ տվեցին: Նույնանման պատկեր էր ստացվել բաժանված

թիփերի մոտ գարնանը տնկելու դեպքում, այն տարբերութիւամբ, որ ծաղկող թիփերի և նրանց ծաղիկների քանակը համեմատաբար քիչ էր, քան աշնանը տնկածների մոտ: Դրանով իսկ հաստատվում են գրականութիւան տվյալները այն մասին, որ բաժանված թիփերի տնկումը պետք է կատարել աշնանը և ոչ թե գարնանը:

Աղյուսակ I

Բաժանված թիփերի քանակը	Աչքերի քանակը մեկ թփում	Տնկման խորութիւնը սմ-ով	1958 թվի աշնան տնկածը				1959 թվի գարնան տնկածը			
			1959 թվի գարնանը		1960 թվի գարնանը		1959 թվի գարնանը		1960 թվի գարնանը	
			աճը սմ-ով	ծաղիկների քանակը մեկ թիփի վրա	աճը սմ-ով	ծաղիկների քանակը մեկ թիփի վրա	աճը սմ-ով	ծաղիկների քանակը մեկ թիփի վրա	աճը սմ-ով	ծաղիկների քանակը մեկ թիփի վրա
2	2	2	13	—	13	—	11	—	13	—
2	2	3	15	—	16	—	13	—	17	—
2	2	5	19	—	16	—	17	—	19	—
2	2	7	19	—	17	—	16	—	17	—
2	2	10	17	—	16	—	17	—	21	—
2	3	2	17	—	19	—	16	—	18	—
2	3	3	21	1	25	1	19	1	23	1
2	3	5	35	2	37	3	23	2	27	2
2	3	7	30	2	35	2	21	3	25	3
2	3	10	28	—	32	—	23	—	27	—
2	5	2	18	—	21	—	18	—	21	—
2	5	3	29	2	23	2	21	1	25	1
2	5	5	43	3	45	4	25	2	29	3
2	5	7	40	2	43	3	23	2	27	2
2	5	10	40	1	43	1	25	—	29	1
2	7	2	21	—	23	—	23	—	27	—
2	7	3	32	1	35	1	28	1	28	2
2	7	5	39	3	41	4	31	3	31	3
2	7	7	39	2	43	2	31	2	32	2
2	7	10	40	1	45	1	30	—	33	1

Աղյուսակից պարզ երևում է, որ թիփի վաղ ծաղկման վրա ազդում են ոչ միայն աչքերի քանակը և բաժանման պրոցեսում հնարավորին չափով արմատալին սիստեմին քիչ մլասվածք պատճառելը, ոչ պակաս կարևոր հանգամանք է նաև տնկման խորութիւնը:

Այդ կապակցութիւամբ նշենք, որ մեր փորձերում մեկական աչքերով բաժանված բույսերը տնկված տարբեր խորութիւններով մեծ մասամբ ոչընչացան հենց առաջին տարին:

Երկու տարվա դիտողութիւնները մեզ բերում են հետևյալ եզրակացութիւան:

1. Երկու աչք ունեցող արմատներ տնկելու դեպքում այդ բույսերը նուրիսիկ երրորդ տարին չեն ծաղկում, անկախ նրանց տնկման խորութիւնից: Այդ բույսերի աճման էներգիան թուլ է լինում:

2. Երեք աչքով տնկված բույսերը առաջացնում են համեմատաբար փարթամ վերերկրյա մասսա և որոշ թփերի մոտ, հատկապես 3—7 սմ խորության տնկվածների, հենց նույն տարին ծաղիկ է առաջանում:

3. Երեքից ավել աչք ունեցող արմատներից ստացվում է շատ փարթամ աճած վերերկրյա մասսա, բոլոր բույսերն էլ նույն տարին ծաղկում են, բացառությամբ 2 սմ խորությամբ տնկվածներից:

Քաղվարդի արագ բազմացման, նորմալ և վաղ ծաղկիլու, փարթամ թփեր ստանալու համար, այն պետք է բաժանել այնպիսի մասերի, որոնք ունենան 3—5 աչք և տնկել միջին հաշվով 5 սմ խորության:

Н. М. ГЕРМАНИЯН

## ОПЫТ РАЗМНОЖЕНИЯ ПИОНА

### Резюме

Пион садовый (*Paeonia hybrida*) принадлежит к числу наиболее ценных многолетников в условиях Ереванского ботанического сада. Быстрейшему его внедрению в местное декоративное садоводство препятствует трудность размножения. Для уточнения и проверки общепринятого способа деления куста были поставлены опыты, в которых посадка производилась осенью (25.X 1958 г.) и весной (25.IV 1959 г.). Разделенные кусты имели 2, 3, 5 и 7 почек и высаживались на разную глубину (2, 3, 5, 7, 10 см).

Учет срока и обилия цветения, а также роста стеблей, в последующие после деления и посадки кустов два года показал следующее.

1. Деленные кусты с двумя почками не зацветают даже на второй год после посадки, независимо от глубины посадки. Рост их стеблей очень слабый.

2. Кусты с тремя и более почками зацветают в первый же год и развивают пышную надземную массу во всех вариантах глубины посадки (кроме 2-сантиметровой). Оптимальная глубина заделки—5 см.

3. Весеннее деление и высадка кустов во всех вариантах опыта дает худшие результаты, по сравнению с осенним сроком.